№ 109 ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24 1888 ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24 № 109

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հիւանդանոցի հարցը Բալախանում. կէս տարի դեռ չէ անցել. Նամակ կարսից. Նամակ Խմբագրին. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆրիդրիխ կայսրի յիշատակարանի հարցը. Ֆիրուզաղայի սպանութիւնը. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նշանածը.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ՀԱՐՑԸ ԲԱԼԱԽԱՆՈՒՄ

Կարդացինք «Մշակի» № 93-ի մէջ Բագուից գրած նամակը, որի մէջ պ. Նամակագիրը խօսելով Բալախանում հիմնված հիւանդանոցի օգտաւէտութեան մասին, մի առանձին գովասանքով է վերաբերվում դէպի հիւանդանոցի հիմնադիրները, աչքի առջև ունենալով այն, որ պարոնը մի այդպիսի դէպքում նրանց վրա չէ նայում որպէս մասնաւոր մարդկանց, այլ հասարակական գործիչների, որոնց գործը քննելու իրաւունք ունի ամեն մի անհատ, իր դատողութիւնները հրապարակ հանելով։

Ինչ վերաբերում է հիւանդանոցի հիմնարկութեան անհրաժեշտութեանը և օգտաւէտութեանը, կամ պ.պ. հիմնարկողների ունեցած ձգտման դէպի մի այդպիսի օգտաւէտ գործ, մենք ոչինչ չունենք դրա դէմ, որովհետև այդպիսի հիմնարկութեան շահաւէտութիւնը պարզ է։ Բայց որովհետև ամեն մի անհատին իրաւունք է տրվում հրապարակապէս քննելու «ինտելիգենցիա և հասարակական գործիչ» անուանվածների գործունէութիւնը, ուստի դա մի յարմար առիթ է խօսելու։

Կարծեմ աւելորդ է խօսել այն բանի վերաբերմամբ, թէ ինչպէս առհասարակ մեզանում, այս կամ այն անհատին շատ հեշտ կերպով «բարեգործ» և «հասարակական գործիչ» և այլ տիտղոսներ են տալիս։ Բայց զարմանալին այն է, թէ ինչու յարգելի նամակագիրը գովելով Բալախանի ինտելիգենցիա կոչվածների կատարած գործը, չէ պախարակում նոյն ինտելիգենցիայի գործունէութեան և վատ կողմերը, որոնք «հասարակական գործիչներից» անապասելի էին։

Այստեղ մի հարց կառաջարկենք. ինչն է նախ հարկաւոր մի մարդու առողջութիւնը պահելու համար, որ միջոցին է աւելի յարմար դիմել,—հիւանդութեան պատճառներին առաջն առնելը, առողջապահական պայմաններին հետևելով, թէ հիւանդանոց հիմնելը, հաւատացած լինելով որ նոյն հակառողջապահական պայմանների մէջ հիւանդութիւնը միշտ և միշտ կը կրկնվի։

Այս հարցերի պատասխանը պարզ է։ Եւ մեր ասածը հաստատելու համար բերենք իրան պ. նամակագրի հետևեալ տողերը։

«Այդ համեստ խմբի կատարած գործի մեծութիւնը կարող են գնահատել նրանք, որոնք ներկայ են եղել մշակների տանջանքներին»։ Այդ տողերից կարելի է եզրակացնել թէ ինչ դրութեան մէջ է գտնվում բանւոր դասակարգը։ Բայց չը մոռանանք, որ բանւորը ճնշված, թշուառ և անհոգ դրութեան մէջ է գտնվում շատ անգամ նոյն իսկ այնպիսի անձնաւորութիւնների իրաւունքի տակ, որոնք «հասարակական գործիչ» են անուանվում։ Սկզբունքով «հասարակական գործիչներից» անապասելի մի բան է այդ, սակայն դառն իրականութիւնը մեր առջև է և մենք պիտի յայտնենք, որ յիշված ինտելիգենցիային պատկանողների իրաւունքի տակ հարիւրաւոր բանւորներ, ծառայողներ են գտնվում։

Այժմ մտնենք նոյն իսկ այդ ինտելիգենտներին ենթարկվող բանւորների դրութեան, նրանց ապրուստի պայմանների մէջ, և թող չը զարմանայ ընթերցողը, որ նրա առջև պիտի բացվի հետեւեալ տեսարանը։ Մութ, նեղ ու խոնաւ, չը գիտեմ խուց թէ սենեակներ ասեմ, որոնց մէջ 5—10 բանւորներ միմեանց վրա թափված են. թանձր ու խոնաւ, խեղդելու չափ ծանր օդ, որը այդ խեղճերն են ծծում։ Մշտական ցամաք հացն է նրանց կերակուրը, իսկ հագուստը ամիսներով չէ փոխվում։ Որպէս մեքենայ նրանք աշխատում են և ոչ մի անգամ, բացի տարվայ մէջ մի երկու տօներից, իրանց հոգեկան պահանջներին լիացում տալ չեն կարողանում։

Այդ անապասելի էր ինտելիգենցիայից, կասեն շատերը, սակայն ինչն է դրա պատճառը։ Դրա պատճառը այն է, որ այդ յարգելի ինտելիգենտ, հասարակական գործիչները՝ բոլորովին անհոգ կերպով են վերաբերվում դէպի իրանց ստորադրված բանւորները, ծառայողները և հակառակ մարդկային սկզբունքի՝ աշխատում են որքան հնարաւոր է, մեռցնել բանւորների մէջ նրանց անհատական իրաւունքները, նրանց «եսը» Եւ այդպիսով բանւորների թշուառութեան պատճառը նոյն այդ գործիչներն են։

Տուէք բանւորին մաքուր ու պատշաճաւոր սենեակ, տուէք նրան այնքան նիւթական միջոց, որ կարողանայ տաք կերակուր և հագուստ ունենալ, տուէք նրան ազատ ժամեր, որպէս զի կարողանայ սպառած ոյժերը կազդուրել և հոգեկան պահանջներին լիացում տալ,—այն ժամանակ հաւատացած եղէք, որ բանւորը կարիք չի ունենայ շատ անգամ հիւանդանոց, կամ նոյն իսկ բժշկին դիմելու, բացի, ի հարկէ, պատահական դէպքերում։

Այդ այդպէս լինելուց յետոյ, մենք ընթերցողին ենք թողնում վճռելու, թէ որքան յարմար է այսպիսի դէպքերում հասարակական գործիչ և այլ այդպիսի տիտղոսներ չառայելը, և վերջացնելով մեր խօսքը, կը ցանկանայինք, որ յիշված ինտելիգենցիան նախ քան հիւանդանոցներ հիմնելը՝ աւելի հոգ տաներ բանւորի կեանքի պայմանները բարելաւելուն և մտածէր առաջն առնել նրա թշուառութեան սկզբնապատճառներին։

Դ.

ԿԷՍ ՏԱՐԻ ԴԵՌ ՉԷ ԱՆՑԵԼ

«Բաֆֆիի ընտանիքը անխնամ է թողված. Բաֆֆիի ընտանիքը ապրելու համար փող չունի. Բաֆֆիի երկու փոքրիկ որդիքը Թիֆլիսի Սօլդատսկի բաղարում կիրակի օրերը գրքեր են վաճառում....» ահա այն լուրերը, որ մի քանի շաբաթից ի վեր հաղորդում են «Մշակի» խմբագրութեան, յարակցելով դրանց զանազան այնպիսի մանրամասնութիւններ, որոնց լսելն անգամ վրդովեցուցիչ է, ուր մնաց նրանց հրապարակ դուրս բերելը....

Խոստովանում ենք, որ դժուար է լսել այդ բոլորը, և հոգու սառնասրտութիւն պահպանել. դժուար ենք ասում, որովհետև դեռ ևս կէս տարի էլ չէ անցել այն օրից, երբ հայոց հասարակութիւնը արտասովոր կսկիծով և արտասովոր յարգանքով թաղեց իր տաղանդաւոր գրողին, համոզելով պէսիմիստներին անգամ, որ ինքը արդէն դիտէ գնահատել իր միջից դուրս եկող օգտակար գործողներին....

Մենք ակամայ յիշում ենք ապրիլի 29-ը. մեր առաջ նորից հանդիսանում են այն փառաւոր ցոյցերը, որ ոչ միայն Թիֆլիսը, այլ ամբողջ ազգը արտայայտեց «խենթի» և «կայծերի» հեղինակի դագաղի առաջ։ Մենք յիշում ենք այն փառաւոր յուղարկաւորութիւնը, որի նմանը Թիֆլիսը քիչ էր տեսել. յիշում ենք Բաֆֆիի դագաղի և գերեզմանի շուրջը խմբված հասարակութեան ցաւակցութիւնը և ոգևորութիւնը. յիշում ենք ամեն կողմերից Թիֆլիս սեղացող հեռագիրները, բազմաթիւ պսակները, ճառերը. յիշում ենք մեծանուն գրողի գերեզմանի վրա արձան կանգնեցնելու և նրա գրուածները հրատարակելու միտքը, յիշում ենք Թիֆլիսի ինտելիգենցիայի և գաւառական երիտասարդութեան մեծ մեծ խոստմունքները, վերջապէս յիշում ենք թէ ինչպէս ամենքը ամեն տեղ մեծ էֆէկտով կրկնում էին այս խօսքերը. «հասարակութիւնը ինքը կը կրթի Բաֆֆիի որդկերանց, ազգը ինքը կը խնամէ նրա ընտանիքը, և երբէք անխնամ չի թողնի նրան», և այլ այդպիսի բաներ....

Կէս տարի առաջ տեղի ունեցած այդ փառաւոր ցոյցերը և մեծամեծ խոստմունքները բնաղդմամբ յիշելուց յետոյ, մեր առաջ պատկերանում է այն վհատեցուցիչ անտարբերութիւնը, որով վերաբերվում են թէ հասարակութիւնը և թէ նրա ներկայացուցիչները դէպի Բաֆֆիի ընտանիքը, և դէպի նրա յիշատակը....

Տաղանդաւոր վիպասանի գերեզմանի վրա փառաւոր, տասն հազարանոց արձան կանգնեցնելու գրութեան, յարակցելով դրանց զանազան այնպիսի մանրամասնութիւններ, որոնց լսելն անգամ վրդովեցուցիչ է, ուր մնաց նրանց հրապարակ դուրս բերելը....

Խոստովանում ենք, որ դժուար է լսել այդ բոլորը, և հոգու սառնասրտութիւն պահպանել. դժուար ենք ասում, որովհետև դեռ ևս կէս տարի էլ չէ անցել այն օրից, երբ հայոց հասարակութիւնը արտասովոր կսկիծով և արտասովոր յարգանքով թաղեց իր տաղանդաւոր գրողին, համոզելով պէսիմիստներին անգամ, որ ինքը արդէն դիտէ գնահատել իր միջից դուրս եկող օգտակար գործողներին....

Մենք ակամայ յիշում ենք ապրիլի 29-ը. մեր առաջ նորից հանդիսանում են այն փառաւոր ցոյցերը, որ ոչ միայն Թիֆլիսը, այլ ամբողջ ազգը արտայայտեց «խենթի» և «կայծերի» հեղինակի դագաղի առաջ։ Մենք յիշում ենք այն փառաւոր յուղարկաւորութիւնը, որի նմանը Թիֆլիսը քիչ էր տեսել. յիշում ենք Բաֆֆիի դագաղի և գերեզմանի շուրջը խմբված հասարակութեան ցաւակցութիւնը և ոգևորութիւնը. յիշում ենք ամեն կողմերից Թիֆլիս սեղացող հեռագիրները, բազմաթիւ պսակները, ճառերը. յիշում ենք մեծանուն գրողի գերեզմանի վրա արձան կանգնեցնելու և նրա գրուածները հրատարակելու միտքը, յիշում ենք Թիֆլիսի ինտելիգենցիայի և գաւառական երիտասարդութեան մեծ մեծ խոստմունքները, վերջապէս յիշում ենք թէ ինչպէս ամենքը ամեն տեղ մեծ էֆէկտով կրկնում էին այս խօսքերը. «հասարակութիւնը ինքը կը կրթի Բաֆֆիի որդկերանց, ազգը ինքը կը խնամէ նրա ընտանիքը, և երբէք անխնամ չի թողնի նրան», և այլ այդպիսի բաներ....

Կէս տարի առաջ տեղի ունեցած այդ փառաւոր ցոյցերը և մեծամեծ խոստմունքները բնաղդմամբ յիշելուց յետոյ, մեր առաջ պատկերանում է այն վհատեցուցիչ անտարբերութիւնը, որով վերաբերվում են թէ հասարակութիւնը և թէ նրա ներկայացուցիչները դէպի Բաֆֆիի ընտանիքը, և դէպի նրա յիշատակը....

Տաղանդաւոր վիպասանի գերեզմանի վրա փառաւոր, տասն հազարանոց արձան կանգնեցնելու

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆՇԱՆԱԾԸ

I

Ամարային կիզիչ արեգակը մօտ էր իր մուտքին։ Երեկոյեան կաղդուրիչ զովը արդէն սկսել էր փոխարինել ցերեկվայ խեղդող տօթին։ Մերթ առ մերթ փչում էր քամին, շարժելով թառամած ծառերի փչոտ տերևները և խաղալով հովանալու համար պատշգամբ դուրս եկած օրիորդների և տիկինների գանգուրների հետ։ Պատշգամբ էր դուրս եկել և Շիրազեան ըստ իր սովորութեան։ Ըստ իր սովորութեան ենք ասում, որովհետև գարնան սկզբից սկսած երեկոյեան ժամերի մեծ մասը նա անց էր կացնում այդ պատշգամբի վրա։ Նրան այդ ժամանակ միշտ կարելի էր տեսնել կամ խոր մտածութեան մէջ շրջելիս և կամ նստած նոյնպէս լարված դրութեան մէջ դիմացի պատշգամբին նայելիս։ Նա միշտ տխուր էր լինում և յօնքերը կիտած և երբ, ձախ ձեռքին յենած, մի տեսակ աղերսական հայեացքով դիմացի պատշգամբին էր նայում, մարդու մէջ զարթեցնում էր ցաւակցական զգացմունքներ։

—Ինչ է նա կորցրել, ինչ է նա որոնում։ Ահա հարցեր, որ ակամայ անցնում էին նրան տեսնողի գլխում։ Եւ յիրաւի, ինչու էր նա տխուր, ինչ էր պատահել նրա հետ։ Զարմանալի չէ։ Երբ նա, դեռ նոր լեղուաբանական ֆակուլտէտը աւարտած, եկել էր Թիֆլիս և պատշաճաւոր ըղբաղմունք չը գտնելով երկար ժամանակ նեղութիւնների և պակասութիւնների մէջ էր ապրում, ուրախ, անձնավստահ և բաւական էր երևում, իսկ այժմ, երբ մի միջնակարգ ուսումնարանում ուսուցչական պաշտօն էր վարում, ապահոված էր փողի կողմից, գործ էր տեսնում, միշտ վհատած և տխուր էր։ Ա՛խր ինչ էր դրա պատճառը։ Լաւ և ազնիւ պաշտօն, ապահոված նիւթական դրութիւն, ինքնուրոյն կեանք, գործելու ասպարէզ, էլ ինչ է պակաս ուրախ և բաւական լինելու համար։ Ինչ և իցէ....

Շիրազեան նստած էր պատշգամբում. նրա հանդէպ նստած էր և մի ուրիշ երիտասարդ, որի սևացած և այրված երեսից պարզ երևում էր, որ նա մի քանի օր արևի տակ ճանապարհորդել է։ Դա Շիրազեանի ընկերն էր՝ Սարգիս Հախվերդեան, որը ուսուցիչ էր մի նահանգական քաղաքում։ Նա, գործերը վերջացրած լինելով, եկել էր Թիֆլիս ամառը «մարդկային կեանք վայելելու», ինչպէս ինքն էր ասում, և իջևանել էր Շիրազեանի մօտ։ Նրանք մօտիկ ընկերներ էին։ Իրար տեսնելը և իրար մօտ գտնվելը երկուսին էլ մեծ բաւականութիւն էր պատճառում։ Քաղցր անցեալի յիշողութիւնը և մտքերի ու զգացմունքների իրար հետ փոխանակութիւնը նրանց մաշված ու յոգնած ջղերին ոյժ և հանգիստ էր տալիս, թմրած ուղեղին աշխոյժ, իսկ հոգուն զուարթութիւն, չը նայելով որ նրանք թէ բնաւորութեամբ և թէ համոզմունքներով բոլորովին իրարից տարբեր մարդիկ էին։

Նրանք նստած էին իրար դիմաց։ Շիրազեան յենված աթոռի մէջքին, Հախվերդեանին էր նայում, իսկ Հախվերդեանը, մի ձեռքը առաջի կողոր սեղանի վրա դրած, միւս ձեռքով խառնում էր թէյը։

—Մի՞թէ այդքան ձանձրալի ու անբովանդակ է այնտեղի կեանքը։ Հարցրեց Շիրազեան, Հախվերդեանի դաւառական կեանքի վրա արած դանդատները լսելուց յետոյ։

—Ձանձրալի ասես ու թողնես։ Առաւօտը հէնց բացում էի աչքերս և նայում լուսամուտիս փոշոտված ապակիներին, սիրտս լցվում էր մի տեսակ անձկութեամբ և կուրծքս ճնշվում էր, կարծես սենեակիս օդը ծանրացած լինէր վրաս։ Երբ վեր էի կենում և ծխախոտը կպցրած պատուհանին մօտենում, փեղկերը բացում և քաղաքին նայում, որտեղից հասնում էին ականջիս կառքերի դղրդոցը, մշակների ու վաճառանոց վազող ծառաների յիչոցները և այլն, անձկութիւնս աւելի էր ծանրանում և ընկնելով բազկաթոռի վրա վհատեցուցիչ մտքերի հոսանքին էի ենթարկվում։ Ուսումնարանը մի քիչ կեանք էր տալիս ինձ։ Բայց դա էլ իր անվերջանալի խառնակութիւններով ու խռովութիւններով կարողացաւ սառեցնել իմ աշխոյժն ու եռանդը և նոյնպէս ձանձրութեան մի վայր դարձաւ ինձ համար։ Դառնում էի ուսումնարանից, ճաշում և պառկում հանգստանալու։ Զարթնում էի կրկին նոյն ձանձրութեամբ և անձկութեամբ։ Դուրս էի գալիս զբօսնելու—այդ երկու անբաժանելի ընկերներս հետևում էին ինձ և այնտեղ։ Վերադառնում էի, խմում թէյը և փոքր ինչ ուսուցչութեանս վերաբերեալ գործերով զբաղվում, իսկ այնուհետև կրկին ենթարկվում էի մտածութիւնների անորոշ հոսանքին ու կրկին ընկնում անորոշ անձկութեան գիրկը։

—Լաւ, մի՞թէ այնտեղի կեանքը և ոչ մի հեռաքրքիր կողմ չունի, որը կարողանար քեզ զբաղեցնել, կամ մի՞թէ, եթէ ուզենայիր, չէիր կարող հաղար ու մի ուշադրութեան և ուսումնասիրութեան բան գտնել այդ կեանքի մէջ և նորանով զբաղվել։ Լաւ չէ՞ր լինի, եթէ, օրինակի համար, ուսումնասիրէիր տեղական ժողովրդի կեանքը, նորա բարք ու վարքը, սովորութիւնները, աւանդութիւնները, հայեացքները, նիստ ու կացը....

—Է՛հ, բաւական է շարես իրար ետևից ամեն օր կրկնվող մտքերը, վրդովված կտրեց Շիրազեանի խօսքը Հախվերդեանը։—Լսել ենք, շատ ենք լսել ու կարդացել։ Ոչ միայն կարդացել եմ ու լսել, այս ես ինքս էլ խօսել եմ ու նոյնը մեծմեծ քարոզել։ Միտդ է ուսանող ժամանակներս ինչ ծրագիրներ էինք կազմել բոլորս էլ, ինչպէս լաւ խօսում էինք, վիճում և ինչպէս հաւատում էինք մեր ասածներին։ Այն ծիծաղելի չէր։ Բայց այժմ ծիծաղելի և մինչև անգամ զզուելի է թվում ինձ, երբ նոյնը կարդում կամ լսում եմ ուրիշից։ «Ուսումնասիրեցէք», ասում էք ամենքդ։ Ախր ինչը ուսումնասիրենք։ Կեանքո՞ւ։ Բայց այդ կեանքը կեղտոտութիւններով լի, անշարժ մի ճահիճ է։ Արժէ՞ միթէ շարժել այդ ճահիճը, որի արձակած գարշահոտութիւնը խեղդելու, սպանելու չափ ծանր կարող է լինել։

Հախվերդեանը դուցէ դեռ շատ երկար խօսէր այս ուղղութեամբ, բայց յանկարծ կանգ առաւ, երբ նայելով Շիրազեանի վրա, համոզվեցաւ որ նա իրան այլ ևս չէ լսում, այլ աչքերը դէպի դիմացի պատշգամբը ուղղած, մի տեսակ մոռացութեան մէջ է ընկել։

համար կազմված խումբը հիասթափվում է, քանի որ մինչև այժմ, նոյն իսկ վիպասանի մահուան թարմ տպաւորութեան տակ, ընդամենը մի երեք—չորս հարիւր բուբլի է միայն հաւաքվել։ Աշխատաւոր հեղինակի գրուածների հաւաքածուն հրատարակելու համար ժողոված դրամը, ինչքան մեզ յայտնի է, հարիւր բուբլու հաղիւ է հասնում, և այդ տխուր երևոյթը աւելի էլ տրխուր է դառնում, քանի որ հանգուցեալ վիպասանի ընտանիքը ապրելու համար նիւթական միջոցներ չունի, քանի որ ժառանգական գործերը առ այժմ այնքան խճճված են, և անօգնական ընտանիքի շուրջը այնպիսի անտարբերութիւն է տիրապետում, որ ուրիշ միջոց չէ մնում, բայց եթէ հայոց ժամանակակից տաղանդաւոր գրողի հռչակված գրքերը Սօլդատսկի բազար ուղարկել երկու մանուկների ձեռքով, որպէս զի մեր հասարակութեան սիրելի իդեալներ պարունակող գրքերը վաճառվեն այն Սօլդատսկի բազարում, ուր վաճառվում են հին պատկերներ, ժանդոտած զէնքեր, ցեց կերած ժամագրքեր և անտէր հանգուցեալների հնամաշ շորերը....

Բայց հեռու չը գնանք. այս տեսակ բաների մասին խօսելը և ծանր, և զզուելի, և վնասեցուցիչ է։ Առ այժմ մենք միայն տխուր իրողութեան վրա ենք մատնանիշ անում, որպէս զի հասարակութիւնը իմանայ այն, ինչ որ իր պարտքն էր իմանալ, և առանց զանազան դատողութիւնների մէջ մտնելու, իրան հասարակութեանն ենք թողնում այդ մասին մտածելը, դատելը և եզրակացութիւն դուրս բերելը....

Մեզ մնում է միայն հարցնել, մթթէ յիրաւի մեր ինտելիգենցիան, և մեր ժողովուրդը ընդունակ են այնքան չուտով մոռանալու իրանց պարտքը դէպի Բաֆֆիի նման մարդը, որի մահվանից կէս տարի անդամ չէ անցել։ Մթթէ ճշմարիտ մեր երիտասարդութիւնը, մեր ինտելիգենցիան և մեր հասարակութիւնը ընդունակ են այդքան չուտով մոռանալու իրանց արտայայտած ոգևորութիւնը, յարգանքը և մեծ մեծ խոստմունքները։ Եւ մթթէ, վերջապէս, մեր ինտելիգենցիան, մեր երիտասարդութիւնը և մեր հասարակութիւնը այդ ասպետան այլանդակված, կեղծ և ֆրազեօր են....

Խ. Մ.

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

—

Սեպտեմբերի 18-ին

Իր ժամանակին հաղորդած եմ ձեզ տեղս պատահած երկրաշարժի առաջին ցնցումի մասին։ Այժմս այսքանը պէտք է ասեմ, որ երկրաշարժի հարուածները չարունակվեցան ամսիս 11-ից մինչև 16-ը, և հետզհետէ տկարանալով, ահա երկու օր է որ հանդարտ է։ Բարեբաղդաբար քաղաքումս ոչինչ վնաս չը պատճառեց երկրաշարժը, բայց նոյնը չէ նահանգումս։ Պաշտօնապէս յայտնի է որ մի քանի գիւղերում տներ են կործանվել. Գեօլէի շրջանում փլատակների տակ մնացել են հինգ մարդ։ Ինչ ասել կուզէ որ սարսափահար ժողովրդի երևակայութիւնը սկսեց զօրեղապէս գործել, մարգարէութիւնները չատացան, այդպիսի դէպքերում անհրաժեշտ դուշակութիւնները մեր մոլորակի վախճանի մասին առաջ եկան. մինչև անդամ ոմանք տարածեցին լուր թէ այս կամ այն տեղը հրաբուխ է բացվել և ռուսական յաւակնութեան յաւակնութիւն ունեցող մի խումբ պատրաստվում էր զիտութեանը ծառայութիւն մատուցանելու, հետազօտելով նորածին հրաբուխը.... Բայց «нѣтъ худа, безъ добра» ասում է ռուս առածը. երկրաշարժը ունեցաւ և իր անհերքելի օգուտը։ Թողնել միմեանց մոռանալը, միմեանց անուանարկելը, չարախնդացութիւնը մեր մերձաւորներին հասած որ և է դժբաղդութեան վրա, ամփոփել ամբողջ ուշադրութիւնը երկրաշարժի վրա, մտաբերել խիղճ, մարդկութիւն, յիշել որ Դամոկլէսեան սրի պէս՝ մեր գլխին կախված մահը կարող է մի դեղեցիկ բոպէում ոչնչացնել մեր խորհուրդները, նոյն իսկ մեր գոյութեան հետ,—մթթէ սա փոքր բան է։ Մեզ նման բարոյապէս բթացած համայնքի համար այդպիսի զգաստացնող երևոյթները, կարելի է ասել անհրաժեշտ են։

***

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

—

Շահնազար, 16 սեպտեմբերի

Կարդացի ձեր լրագրի 98-րդ համարի «Ժողովրդական բժշկական գրքերի պահանջը» առաջնորդող յօդուածը։ Արդարև սրանից աւելի մեծ պահանջ չը կայ մեր ժողովրդի մէջ։ Բոլոր գիւղերը տեսակ տեսակ հիւանդութիւններով ճարակված են. խեղճ ազգաբնակութիւնը անբժիշկ և անդեղ չարունակ մահվան զոհ է լինում։ Մօտ 200 տուն ունեցող Շահնազար հայ-կաթոլիկ գիւղում, երկու ամսվայ միջոցին 50 երեխայք մահվան զոհ եղան,—ոմանք կարմրուկ ասված հիւանդութիւնից մեռնելով, ոմանք վարդախտից, ոմանք պոկ-ուռոյցքից և ոմանք էլ անհասկանալի հիւանդութիւններից։ Ինչպէս որ նահանգապետի և դաւառապետի կարգադրութեամբ տեղական պահպան ձիաւորները պահելու և տարի «խարայլի» համար ամեն մի ծուխից 70 կոպէկ տարեկան հարկ են ժողովում, թող այնպէս էլ մի բժշկի համար ժողովեն մի յայտնի տուրք ժողովրդից և կարգադրեն, որ բժիշկը ամեն գիւղերը շրջի ու ազգաբնակութեան կեանքի պահպանութեան համար հոգայ։ Ժողովուրդը սիրով և յօժարութեամբ կը վճարէ բժշկի ռոճիկը։ Զարմանալի է որ տեղական դատաւորները՝ անասունների կեանքի համար աւելի հոգացողութիւն և պահպանութիւն են անում, քան թէ մարդկանց կեանքի համար։

Լօռու դաւառը, հեղեղներից և կարկտից ազատվելով՝ բաւական ցորեն արտադրեց այս տարի, սակայն տալուճա (պիան) կոչված վնասակար որոմն սաստիկ բազմանալով ցորենների մէջ, մեծ վնաս է տալիս ցորենին. որչափ էլ աշխատեն, չեն կարող այդ որոմն բաժանել ցորենից, որովհետև մի և նոյն մեծութիւն և ծանրութիւն ունի։ Ահա այս նամակով մի քանի հատիկ եմ ուղարկում ձեզ, նմուշի համար։ Խեղճ ժողովուրդը պիանը ցորենի հետ աղալով, անգիտակցաբար նրանից հաց է թխում,—և այդ հացը կերած ժամանակ մարդը հարբածի պէս է լինում, առնուազն 3—4 ժամի չափ և սաստիկ գլխացաւ է զգում։ Արդեօք կարելի չէ, որ մի հնարք գտնեն խելացի մարդիկ, մի որ և է դեղ խառնեն խմորի հետ,—որպէս զի տալուճա ասված սերմը ուտողին չարբեցնել և գլխի ցաւ չը պատճառէ։ Այս հնարքը գտնող անձը մեծ շահ և օգուտ կունենայ ազգաբնակութիւնից. այս գիւտ անողին համայնքը մեծ փող կը վճարէ։ Ամեն անձրևային տարիներում Լօռու և Ծալկայի դաւառների մէջ այս տալուճա ասված սերմը մեծ բազմութեամբ է բուսնում ցորենի հետ խառն և մեծ վնաս է պատճառում գիւղական ազգաբնակութեանը։

Հ. Ս. վ. Եաղիճեան

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 23 սեպտեմբերի

Ձեր պատուական լրագրի 108 համարում բարեհաճեցիք իմ հասցէն գրելու, որպէս զի դիւրութիւն տուած լինէք սօլիտերի դեղը պահանջողներին։ Ընդ սմին յայտնելով իմ անկեղծ շնորհակալութիւնս, խնդրում եմ բարեհաճէք հրատարակելու այս երկտողս. ես այժմ տեղափոխվել եմ դարձեալ՝ Զուղուրեթում, Պանասեվիչի փողոցի վրա, Բաբանովի տանը, հայոց եկեղեցու հանդէպ։ Ուստի նրանք, որոնք ցանկանում են սօլիտէրի դէմ իմ պատրաստած դեղից ստանալ, խնդրում եմ ուղղակի դիմեն ինձ։ Աւելորդ չեմ համարում յայտնել, որ այս դեղովս արդէն բժշկվել են 1135 հոգի, որոնց թւում յիսունի չափ եւրոպացիք են, գլխաւորապէս ֆրանսիացիք։ Որպէս զի դեղը մատչելի լինի ամենայն դասակարգի, գինը նշանակում եմ 3 բուբլի Թիֆլիսում, իսկ Թիֆլիսից դուրս 3 ր. 50 կ. փոստի ծախսով։

Մարտիրոս Հախնազարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Արձագանք» շաբաթաթերթը մի առանձին սիրով է ձգձգում Ներսիսեան դպրոցի տեսուչ Բէգնազարեան քահանայի հարցը. և այդ ի հարկէ հասկանալի նպատակով։ Շաբաթաթերթը շատ լաւ է հասկացել, որ այժմ «յարմար» ժամանակ է ջուրը պղտորելու համար։ Պ. Ցովհաննիսեան և ընկ. ազատ են իրանց ամեն տեսակ գործերի մէջ. մենք չենք խօսի այն տեսակ գործերի մասին, որոնք կատարվում են ծածկաբար, բայց անուշադրութեան չենք տայ այն պատասխանը, որը մեզ տալիս է «Արձագանքը» Ներսիսեան դպրոցի տեսչի վերաբերութեամբ։ Մենք ասեցինք, որ պ. Ցովհաննիսեան և՛ ընկ. իրանք էլ են ուզեցել, որ Բէգնազարեան ուսուցիչ և տեսուչ ընտրվի։ Պ. Ցովհաննիսեան մեզ պատասխանում է, որ տեսչի ընտրութեան ժամանակ «իր նրաստութիւնը» Թիֆլիսում չէր։ Տարօրինակ միամտութիւն։ Այդ առ առաւելն կը նշանակի, որ Բէգնազարեանի տեսուչ ընտրվելու օրը պ. Ցովհաննիսեան անձամբ ձայն չը տուեց հոգաբարձական նիստում, բայց այդ երբէք չէ նշանակում, որ նոյն պ. Ցովհաննիսեան չէ աշխատել Բէգնազարեանի տեսուչ ընտրելու մասին, և որ պ. Ցովհաննիսեանի կուսակցութիւնը դադարել է այդ մասին հոգալուց։ Այդ առաջին։ Իսկ երկրորդ՝ եթէ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը շատ է ուզում, որ Բէգնազարեան հրաժարվի տեսչութիւնից, ինչպէս «Արձագանքն» է հաւատացնում, ապա ինչու անմիջապէս չէ ընդունում նրա հրաժարականը, և ինչու է ամիսներով յետաձգում հրաժարականի հարցը։ Չէ՞ որ մայիսին աւելի յարմար է ընդունել տեսչի հրաժարականը և նոր տեսուչ փնտռել, քան թէ սեպտեմբերին, երբ դպրոցը բացված է, երբ բոլոր գործերը հին տեսչի ձեռքումն են, և երբ նոր տեսուչ գտնելը աւելի դժուար է։ Աւելի աղնիւ չէր լինի, եթէ պ. Ցովհաննիսեան ասէր, որ իր կուսակցութեանը միայն ցանկալի չէ Բէգնազարեանի տեսուչ մնալը, քանի որ Բէգնազարեան դաւաճանեց այդ կուսակցութեանը և խառնվելով Քամոյենց եկեղեցու երեցփոխի հարցի մէջ՝ իր դէմ զինեց պ.պ. Աքիմեանին, Ցովհաննիսեանին և Եւանդուլեանին։ Բայց մթթէ դպրոցի տեսչին հրաժարեցնելիս հոգաբարձութիւնը իրաւունք ունի ղեկավարվել նրանով, թէ ինչ կապ ունի տեսուչը Քամոյենց եկեղեցու երեցփոխի խայտառակ հարցի հետ.... Իսկ եթէ տեսուչը անարժան է, անօգուտ է դպրոցի համար, և եթէ հոգաբարձութիւնը համոզված է դրանում,—թող չատպի ուրեմն նրան հեռացնելու, էլ ինչի է ամիսներով յետաձգում Բէգնազարեանի հրաժարականի խնդիրը։ Մենք համոզված ենք, որ Բէգնազարեան ոչոքի դանդատ չի դրի, եթէ ձայների առաւելութեամբ վճռվի նրան արձակել տեսչութիւնից....

—

«Մշակի» ներկայ համարում տպում ենք «Արևելք» լրագրից վերցրած թիւրքաց պաշտօնական—Պետրոս, լաւ է, ես խօսելով լեզուս էլ ցաւեցրի, իսկ դու չես էլ լսում ասածս։

—Է՞հ, ինչ լսեմ։ Շատ եմ լսել այդպիսի գանդատներ։ Դու չես առաջինը, դու չես լինելու և վերջինը։ Քեզ նման թուլամորթ պեսիմիստներ շատ կան, կարծես չը կամենալով պատասխանեց Շիրազեանը, և Հախվերդեանի ուշքը դիմացի պատշգամբին հրաւիրելով, ուր մի օրիորդ և մի երիտասարդ նստած թէյ էին խմում, շարունակեց,—տեսնում ես,—այդ օրիորդն ու երիտասարդը, իրար վրա սիրահարված են և արդէն նշանված։ Բախտաւոր արարածներ, բացականչեց նա և երեսը դարձնելով սկսեց արագութեամբ խառնել թէյը։

—Է՞հ, մեծ բաղդաւորութիւն։ Շուտով կաւելանայ կենդանի մեռածների մի չքնաղ դոյդ։—Չէ որ այդ պսակվելը,—շատ անդամ կենդանի մեռնել կը նշանակէ։

—Սխալվում ես։ Քո տեսած ու դիտեցածներիցը չեն։ Երիտասարդը Մօսկվայի համալսարանի ուսանող է։ Նրա մասին, ասենք, ոչինչ չեմ կարող ասել, ով գիտէ ինչ.... դէ, դեռ ուսանում է, ոչինչ որոշ բան ասել չէ կարելի, սկսեց կմկմալ Շիրազեանը, կարծես երիտասարդի մասին խօսելը նրա համար անհաճելի ու ծանր էր,—իսկ օրիորդը, շարունակեց նա,—ա՛հ, մի սքանչելի, մի երկնային արարած է։ Համեստ, եռանդուն, աղնիւ, բարի և սիրող սրտով.... մի խօսքով դեղեցիկ յատկութիւններով օժտված մի իդէալական արարած։ Ես նախատեսնում եմ, որ փայլուն ապագայ է սպասում դրանց։ Այդպիսի կինը կարող է երջանկացնել իր մարդուն։ Այո՛, երջանիկ, շատ երջանիկ ընտանիք պիտի լինի այդ ընտանիքը։

—Այո, երջանիկ, շատ երջանիկ։ Պետրոս, մթթէ հաւատում ես, որ կարող է լինել աշխարհիս վրա երջանիկ ոչ թէ մի ամբողջ ընտանիք, այլ գէթ մի անհատ։ Ես գոնէ բոլորովին ջնջել եմ իմ բառարանից այդ բանը և դադարել եմ այդպիսի ցնորքներին հաւատալուց։

—Է՛հ, էլի սկսեց։ Եղբայր, մթթէ դու իսկի մի լաւ բանի չես հանդիպել այս կեանքում, մթթէ ամեն ինչ քեզ վրա բացասական ազդեցութիւն է ունեցել։ Զարմանալի մարդ ես։ Ի հարկէ անպայման երջանիկ կեանք չը կայ և չէ էլ կարող լինել, որովհետև երջանկութիւնը մի իդէալ է, որին միշտ ձգտում է մարդը։ Բոլորովին հասնել այդ իդէալին անկարելի է, բայց մօտենալ նրան կարելի է։ Երջանիկ մարդ ասելով մենք հէնց այդպէս էլ հասկանում ենք, այսինքն մի մարդ, որ ուրիշների հետ համեմատելով աւելի է մօտեցել այդ իդէալին։—Նոյնը կարելի է ասել և այս զոյգի մասին։ Այժմեանից ես կարող եմ ասել, որ նրանք ուրիշներից շատ և շատ երջանիկ պիտի լինեն, որովհետև նրանց մէջ կան այնպիսի յատկութիւններ և նշաններ, որոնք պարզ դրական են իմ ասածներին։

—Պետրոս, շատ դիւրահաւատ մարդ ես։ Ամեն բանի մէջ միայն լաւն ես տեսնում։ Դու որտեղից գիտես, որ այդ պատանեկական հասակում զարթնած սէրը հասուն հասակում չէ պաղելու։ Ինչ բան կարող է դրական լինել, որ այդ երիտասարդը աւարտելուց յետոյ, տարիներ անցնելուց յետոյ, ուրիշ տեսակ աղջիկ չի ուզիլ կամ ինչպէս կարող ես ասել, որ նրանց համոզմունքները ու հայեացքները այս մի քանի տարում այնքան չեն փոխվելու, որ արգելք լինեն նրանց իրար հետ կապվելուն ու երջանիկ լինելուն։

—Է՛էէ.... անբաւականութեամբ պատասխանեց Շիրազեանը և կպցրեց ծխախոտի զլանակը։—Ի՛նչ տեսակ արտասովոր մտքեր են անցնում գլխովդ։ Չէ, մի ասա՝ «ինչ գիտես, թէ այս բոպէին պատշգամբը չէ փլչելու ու նրանց էլ սպանելու»։ Ես քեզ ասում եմ, որ այդ կինը մի իդէալական կին է։ Նա ընդունակ է անձնազոհութեան։ Իսկ այդպիսի կնոջ ձեռքով երջանկութիւնը անհասանելի բան չէ։

—Էլի դու քո էշդ ես քշում։ Կարծես բանը միայն օրիորդիցն է կախված։ Չէ՞ որ այդ երիտասարդն էլ դեր է կատարում այդտեղ, և ոչ երկրորդական դեր. բաւական է որ նա հրաժարվի իր դերից և դու կը տեսնես, որ քո այդ երջանկութեան համար ստեղծված աղջիկն էլ յետին թշուառների կարգը կանցնի։

—Այդ անկարելի է։

—Հը՞, ը՞ը. ուզում ես դրիր յիշատակարանիդ մէջ այսօրվայ ասածներս. ապագան ցոյց կը տայ նոցա ճշմարտութիւնը։

—Ես քեզ ասում եմ, որ անկարելի է, անկարելի։ Այո, անկարելի է, կարծես ինքն իրան կրկնեց Շիրազեանը երրորդ անդամ մի և նոյնը։

—Լաւ, կը տեսնենք, աւելացրեց Հախվերդեանը և վերկացաւ տեղից. գնանք քնելու, ես բոլորովին ջարդված եմ և քնել եմ ուզում....

Փոքր ինչ յետոյ Հախվերդեանը արդէն խռռացնում էր։ Շիրազեանը անհանգստութեամբ չուռումուռ էր գալիս անկողնում, իսկ դիմացի տնից, Սումբուլեանների բնակարանից, գալիս էր դաշնամուրի ձայնը, օրիորդի և երիտասարդի երդեցողութեան հետ միասին։

—Երջանիկ, երջանիկ արարածներ, մտածում էր Շիրազեանը։ Մթթէ սորանց ապագան կարող է անբախտ լինել, ինչպէս ենթադրում է Հախվերդեանը։ Ախր ինչ՞ բան կարող է սորանց անբախտութեան պատճառ լինել։ Բայց եթէ երիտասարդը, յիրաւի, ինչպէս ասում էր նա, ետ կանգնի իր խօսքից, չը կամենայ պսակվել օրիորդի հետ.... Ո՛հ, այն ժամանակ չէ կարելի մինչև անդամ երևակայել՝ թէ ինչ թշուառ դրութեան մէջ կընկնի օրիորդը։ Առաջին, նա, ես հաւատացած եմ, որ սիրում է երիտասարդին ջերմ և անկեղծ սիրով, երկրորդ, ծնողները, ազգականները, այդ անիծեալ հասարակաց կարծիքը հանդիստ չեն տայ նորան և դերեզմանում. նա յաւիտեան հասարակաց կարծիքի առջև կը մնայ արատաւորված, իսկ արատաւորված անունը մեր ժամանակում կանանց համար մահից էլ վատ է.... Ով գիտէ, գուցէ այդ երիտասարդը ընդունակ է այդ տեսակ ստորութեան. բայց բաւական է, իմ ինչ գործն է. ինչ լինում է, լինի։ Իսկ ես արդէն պիտի կարեմ յոյսս և ձեռք քաշեմ բոլորովին իմ ցնորքներից, որքան էլ որ ծանր լինի ինձ համար այդ անելը.....

Այդ ինչ ցնորքներ էր ուզում ցրել Շիրազեանը։

(Կը շարունակվի)

նում էր։ Շիրազեանը անհանգստութեամբ չուռումուռ էր գալիս անկողնում, իսկ դիմացի տնից, Սումբուլեանների բնակարանից, գալիս էր դաշնամուրի ձայնը, օրիորդի և երիտասարդի երդեցողութեան հետ միասին։

—Երջանիկ, երջանիկ արարածներ, մտածում էր Շիրազեանը։ Մթթէ սորանց ապագան կարող է անբախտ լինել, ինչպէս ենթադրում է Հախվերդեանը։ Ախր ինչ՞ բան կարող է սորանց անբախտութեան պատճառ լինել։ Բայց եթէ երիտասարդը, յիրաւի, ինչպէս ասում էր նա, ետ կանգնի իր խօսքից, չը կամենայ պսակվել օրիորդի հետ.... Ո՛հ, այն ժամանակ չէ կարելի մինչև անդամ երևակայել՝ թէ ինչ թշուառ դրութեան մէջ կընկնի օրիորդը։ Առաջին, նա, ես հաւատացած եմ, որ սիրում է երիտասարդին ջերմ և անկեղծ սիրով, երկրորդ, ծնողները, ազգականները, այդ անիծեալ հասարակաց կարծիքը հանդիստ չեն տայ նորան և դերեզմանում. նա յաւիտեան հասարակաց կարծիքի առջև կը մնայ արատաւորված, իսկ արատաւորված անունը մեր ժամանակում կանանց համար մահից էլ վատ է.... Ով գիտէ, գուցէ այդ երիտասարդը ընդունակ է այդ տեսակ ստորութեան. բայց բաւական է, իմ ինչ գործն է. ինչ լինում է, լինի։ Իսկ ես արդէն պիտի կարեմ յոյսս և ձեռք քաշեմ բոլորովին իմ ցնորքներից, որքան էլ որ ծանր լինի ինձ համար այդ անելը.....

Այդ ինչ ցնորքներ էր ուզում ցրել Շիրազեանը։

(Կը շարունակվի)

հրամանը Սուլթանի պալատում նոր ներքինապետի նշանակութեան մասին։ Հինը պաշտօնանկ է եղած, որովհետև Սուլթանի պալատում ներքինիների մէջ խռովութիւն էր պատահել և ներքինիներից մէկը սպանել էր միւսին, որի համար և կախաղանի դատապարտուեց։ Այդ անցքը այն հետևանքն ունեցաւ, որ ներքինապետը պաշտօնանկ եղաւ, իսկ ներքինիներից շատերը աքսորւեցան դէպի ափական նահանգները։

—

«Հիւսիսային գործակալութիւնը» հեռագրում է մեզ Պետերբուրգից, սեպտեմբերի 21-ից, որ բժշկական դեպարտամենտի կառավարիչ Մամօնօվ վախճանուեց։

—

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ ֆինանսների մինիստրութիւնը առաջարկեց դէմստվօի հարկատուութեան հարցը քննող յանձնաժողովին շտապել իր աշխատանքները վերջացնելու, որպէս զի դէմստվօի հարկատուութեան վերջնական ծրագիրը ներկայացրած լինի պետական խորհրդին այն ժամանակ, երբ կը քննվի պետական խորհրդի մէջ դէմստվօի վերանորոգութեան պրօեկտը։

—

Սեպտեմբերի 21-ին քննվեցաւ ԹԻՖԼԻՍԻ նահանգական դատարանում Աբրահամ Ամիրխանեանցի գանգատը այժմ դադարած «Մեղու Հայաստանի» լրագրի նախկին խմբագիր Պետրոս Սիմէօնեանցի դէմ։ Ամիրխանեանց գանգատվում է թէ Սիմէօնեանց տպեց իր լրագրում վիրաւորիչ բնաւորութեան մի կեղծ նամակ Ամիրխանեանցի ստորագրութեամբ և նոյնպէս մի քանի յօդուածներ, որոնց մէջ ամբաստանում է Ամիրխանեանցին և շօշափում է նրա պատիւը։ Դատարանում նախագահում էր պ. Կարնօվիչ, անդամներ էին պ.պ. Ստէփանօվ և Տրօցկի, մեղադրվածին պաշտպանում էր պ. Սենեքերիմ Արծրունի, իսկ իրան Ամիրխանեանցի բացակայութեան պատճառով՝ որպէս նրա հաւատարմատար ներկայացաւ պ. Շաէֆերբէկէր։ Բազմաթիւ վկաներից այս անգամ շատերը չը ներկայացան։ Դատարանը հարցափորձի ենթարկեց եղած վկաներին, ապա կարդացվեց էկսպէրտների եզրակացութիւնը, որով նրանք հաստատում են թէ «Մեղուի» մէջ տպված նամակը՝ ոճի, քերականական ձևերի, և ընդհանրապէս լեզուի կողմից չէ կարելի Ամիրխանեացի իսկական նամակ համարել։ Այնուհետև խօսեց պաշտպանը, որին երկու խօսքով պատասխանեց մեղադրողի հաւատարմատարը։ Վճռի կայացնելը յետաձգվեց միւս առաւօտեան։ Սեպտեմբերի 22-ին դատարանը դուրս բերեց հետևեալ վճիռը. Պետրոս Սիմէօնեանցին արդարացնել, իսկ գործի դատավարութեան բոլոր ծախսերը յատկացնել կառավարութեան հաշւին։

—

Այս օրերս Թիֆլիս եկան՝ Նորին կայսերական Մեծութեան պալատի աւագ-հօֆմարշալ իշխան Տրուբեցկօյ, աւագ-արարողապետ իշխան Դօլգօրուկի, և պետական խորհրդի անդամ, սենատոր Դուրնօվօ։

—

Սեպտեմբերի 21-ին, տեղի ունեցաւ «Հայուհեաց Բարեգործական ընկերութեան» Ձեռագործի և ձևի դպրոցի բացումը։ Աշակերտուհիների թիւը առ այժմ քառասունի է հասնում։

—

Սեպտեմբերի 22-ին, հինգշաբթի օր, անդրկովկասեան երկաթուղու արտակարգ գնացքով Թիֆլիս հասաւ պարսից շահի յատուկ ներկայացուցիչ, պրինց Հեսսամուս-Սալթանէ։

—

«Աղբիւր» ամսագրի խմբագիրը խնդրում է մեզ յայտնել, որ վաղը, կիրակի, սեպտեմբերի 25-ին երեկոյեան 6 ժամին յիշեալ ամսագրի խմբագրատանը վիճակ պիտի գցվի բաժանորդներին մէջ «Աղբիւրի» պրէմիան՝ պ. Բաշինջաղեանի «Աղթամարի ծով» նկարը։ Ցանկացողները թէ բաժանորդներից և թէ կողմնակի անձինքներից, կարող են ներկայ գտնվել վիճակահանութեանը։

—

«Աղբիւր» ամսագիրը իր վերջին համարում առաջարկում է տօնել Պերճ Պռօշեանի գրական գործունէութեան 30-ամեայ յօբելեանը։ Դա համակրութեան արժանի միտք է։ Այդ առիթով «Աղբիւրի» երկրորդ բաժնում մի բաւական երկար յօդուած գրելով, և ընդհանրապէս մեր գրականութեան զարգացման մասին մի քանի, թէև կարճ, բայց արդարացի մտքեր յայտնելով, պ. Գ. Աղայեան բաւական երկար և գովասանքով է խօսում «Սօս և Վարդիթերի» հեղինակի անձնաւորութեան մասին, բայց այդ գովասանքը երբեմն շատ մ ա զ ա լ լ ո ւ է դառնում։ «Պռօշեանը,—ասում է պ. Աղայեան,—գրում է չափազանց արագ։ Ես ինքս վրա հասայ «Սօս և Վարդիթերը» գրելիս. մօտ կանգնած էի լինում միշտ, երբ նա գրում էր Խրիմեան Հայրիկի Թիֆլիսի եկեղեցիներում տուած քարոզները, տեսել եմ նրան և սաստիկ ջերմութեան մէջ գրելիս և այնպիսի արագութեամբ, որ մի քանի րոպէի մէջ ամբողջ թերթեր էր լցնում, բայց ի հարկէ անկապ և անմիտ բաներ։ Պռօշեանը գրելացաւ ունի, և այս կողմանէ նա արժանի է հոգեկան բժշկների ուշադրութեան»։—Այդ բոլորը, ի հարկէ պէտք է վերագրել մեր ժողովրդական վիպասանի գրչի տարօրինակ առանձնայատկութիւններին, երբ նա կրիտիկական յօդուածներ է գրում, բայց դժուար թէ ինքը, «Հացի խնդրի» հեղինակը, շատ էլ գոհ լինի «Ցարութիւն և Մանուէլի» հեղինակի այդպիսի ատտեստացիայից.....

—

Մեզ խնդրում են տպագրել հետևեալը։ «Կիրակի, սեպտեմբերի 25-ին, Թիֆլիսի Աւետարական կլուբի Թատրօնական դահլիճում (նախկին Կրուժօկ, Արշակունու տանը), հայ դերասանական խումբը, պ. Ծովակի օգտին, կը տայ մի ներկայացում։ Կը խաղան, առաջին անգամ, «Հարստացած Աղքատներ», կօմեդիա 4 գործողութեամբ և 6 պատկերներով, հեղինակութիւն Յ. Ս. Պարոնեքեանի։ Անտրակտներում կը նուագէ զինուորական երաժշտութիւնը։ Տեղերի գինը սովորականն է։ Սկիզբն է $8^{1}/_{2}$ ժամին երեկոյեան։»

—

Պետական բանկին և սրա բաժանմունքներին իրաւունք պէտք է տրվի, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, փոխատւութիւն անել ծ խ ա խ ո տ ի գրաւականով, այն պայմաններով, ինչ պայմաններով որ փոխատւութիւն է լինում շ ա ք ա ր ի աւազի գրաւականով։

—

Օ ղ ի հ ա ն ո ւ թ ե ա ն գործը ծաղկեցնելու համար, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագիրները, հարց է յարուցված օ ղ ի հ ա ն ո ւ թ ե ա ն կ ո ւ ր ս ե ր հիմնելու մասին, ուրտեղ պէտք է պատրաստվեն ուսեալ օղեհաններ։

—

Թիֆլիսի «Իմպէրիալ» կոչված հիւրանոցում ի ցոյց է դրված մի թանգագին գ ո ր գ, որը բերված է Պարսկաստանից այստեղ վաճառելու համար։ Գորգը հիւսած է մ ե տ ա ք ս ի ց, և քաշը մօտ երկու պուդ է։ Տէրը գնահատում է գորգը 3,000 րուբլի, թէև տեղական անձինք գնահատում են նրան 1,200 րուբլով միայն։ Դժուար թէ այդպիսի ա պ ր ա ն ք ը հեշտութեամբ վաճառվի Թիֆլիսում, քանի որ Պարսկաստանում հիւսած այդ գորգը գեղեցկութեան և նկարների կողմից բացի «պարսկական ճաշակին» յատուկ այլանդակ ծաղկանկարներից,—ուրիշ ոչինչ չէ ներկայացնում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԻԴՐԻԽ ԿԱՅՍՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ ՀԱՐՑԸ

—

Գերմանական «Deutsche Rundschau» հրատարակութեան մէջ նորերս լոյս տեսած Ֆրիդրիխ կայսրի յիշատակարանը ամենից աւելի սրտնեղութիւն իշխան Բիսմարկին է պատճառել։ Մի այդպիսի երևելի դօկումենտ, ինչպիսին է ազատամիտ գաղափարների համակրող կայսրի յիշատակարանը, ի հարկէ, չէր կարող վճռական ազդեցութիւն չը գործել ամբողջ Գերմանիայի վրա, և հասկանալի է թէ ինչու իշխան Բիսմարկ երկիւղ է կրում մտքերի այն փոփոխութիւնից, որ կարող է առաջ գալ գերմանական ժողովրդի մէջ, իրանց հայրենիքի մօտիկ անցեալի, գերմանական միութեան և ի մէջի այլոց Բիսմարկի գործունէութեան վերաբերութեամբ։

Իր յիշատակարանում Ֆրիդրիխ ամենայն անկեղծութեամբ վերաբերվելով դէպի իրողութիւնները և անձնաւորութիւնները, դուրս է բերել մի քանի մարդոց իրանց յատուկ գոյներով։ Դոցա մէջ է և իշխան Բիսմարկ։ Այդ յիշատակարանը այնքան ուժգին կերպով է խախտում Բիսմարկի անցեալ փառքի հիմքերը, որ կանցլէրը անհրաժեշտ համարեց առաջարկել տալ, որ «Deutsche Rundschau»—խմբագրի դէմ դատ սկսվի, մեղադրելով նրան՝ առանց այժմեան կայսրի թոյլտւութեան՝ պետական դօկումենտներ հրատարակելու համար։

Սակայն Բիսմարկի այդ առիթով ներկայացրած զեկուցումը, որի մանրամասնութիւնները արդէն յայտնի են, աւելի հաստատում է հրատարակած յիշատակարանի ճիշդ, քան թէ կեղծ լինելը։ Բիսմարկ այնքան հեռու է գնում իր ընդդիմախօսութեան մէջ, որ այն միտքն է յայտնում, թէ նախկին թագաժառանգից, այսինքն Ֆրիդրիխից, ծածուկ էին պահվում հիւսիսային գերմանական կառավարութեան մտադրութիւնները, վախենալով որ թագաժառանգը իր «անխոհեմութեամբ» կարող է առիթ տալ, որ օտար պետութիւնները իմանան Գերմանիայի գաղտնիքները.....

Այդպիսով իշխան Բիսմարկ, յիշատակարանի հեղինակի, նախկին թագաժառանգի, և վերջումն էլ Ֆրիդրիխ կայսրի մահուանից յետոյ չէ խղճահարվում այդպէս անտեղի կերպով խօսելու հանգուցեալ կայսրի մասին, քաջ գիտենալով, որ այլ ևս կենդանի չէ նա, որ կարողանայ ըստ արժանոյն վերաբերվել դէպի այդ տեսակ ի ն ս ի ն ո ւ ա ց ի ա ն ե ր ը.... Այդպէս անպատկառ կերպով վերաբերվել դէպի մեռած մարդկանց անձը, այն մարդոց, որոնց կենդանութեան ժամանակ խօսք անգամ արտասանել չէին կարողանում նոցա առաջ, իրանց թոյլ կը տան միայն Բիսմարկի նման անձինք, որոնք իրանց բոլոր տաղանդի և ոյժի հետ միասին ունեն այդպիսի աններելի փոքրոգութիւն։

Այդ փոքրոգութիւնը, պէտք է նկատել, վերջին ժամանակներս դարձել է իշխան Բիսմարկի յատկանիշը. Նա կ ե ղ ծ է համարում այն բոլոր դօկումենտները, որոնք բաց են անում նրա գործունէութեան գաղտնիքները, որոնք ցոյց են տալիս նրա արածների իսկական միտքը և նպատակը, որը նա միշտ աշխատում է ծածկել մարդկանց աչքերից։ Սրանից մի քանի ժամանակ առաջ «Revue des deux Mondes» ամսագիրը հրատարակեց Բիսմարկի մի պաշտօնական գրութիւնը Ալէքսանդր Բատտենբէրգի և գերմանացոց իշխանուհու ամուսնութեան հարցի մասին։ Իշխան Բիսմարկ ուրիշ ոչինչ չը կարողացաւ ասել, այլ միայն կողմնակի կերպով ուզեց համոզել, որ այդ հրատարակութիւնը կ ե ղ ծ է։ Նոյնն է ասում և այժմ երկաթէ կանցլէրը և յիշատակարանի մասին, և իր վրէժը առնելու համար, պահանջում է պատժել յիշեալ օրգանի խմբագրին նրա համար, որ նա առանց թոյլտւութեան հրատարակել է պետական դօկումենտ, և դրանով Բիսմարկ ուզում է անպատճառ պատժել տալ «Deutsche Rundschau»-ի խմբագրին, գիտութեամբ մի կողմ թողնելով և դօկումենտի իսկական լինելու խնդիրը։

Ինչպէս երևում է, «ժամանակները փոխվել են», և երկաթէ կանցլէրի «փառքի» փայլուն շրջանը անցել է, և այնքան տարի Գերմանիայի ղեկը իր ձեռքում բռնած իշխան Բիսմարկին, իրաւունք կայ ենթադրելու, մնում է փոքր առ փոքր յետ քաշվել իր մեծ պաշտօնից և տեղ տալ նոր հայեացքներով ղեկավարվող մարդկանց....

ՖԻՐՈՒԶ ԱՂԱՅԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

—

Երեկի Թուրք լրագրաց մէջ հրատարակուած է Ներքին գործոց նախարարութեան հետևեալ պաշտօնական զեկոյցը։

«Նախորդ ներքինապետ Շէրէֆէտտին աղա, առաջին միւսահիպ Թահսին աղա և միւսահիպ Հիւսամէտտին, Խալիլ, Բասիմ, Սաֆվէթ, Շաքիր ու Բիւսթէմ աղաները պաշտօնանկ եղած և տարագրուած են ի Մէտինէ Բլէվնա շոգենաւով որ շաբաթ օրն արդէն Ճիտտէ կը մեկնէր իսլամ ուխտաւորներն առնլու համար։

«Փոխանակ Շէրէֆէտտին աղայի, ներքինապետ անուանուած է նորա օգնական Բարձր. Եավէր աղա և սորա օգնական անուանուած է Շէհրէտտին աղա։ Բարձր. Եավէր աղայի պաշտօնը վաւերացնող կայս. հրովարտակի ընթերցումը տեղի ունեցած է այս կիւրակի Ն. Բարձրութեան պաշտօնատան մէջ, սովորական արարողութիւններով։ Ցաւարտ ընթերցման, բոլոր ներկայք ջերմ բարեմաղթութիւններ ըրած են վասն կենաց և բարօրութեան Վ.Հ. Սուլթանին։

«Նախընթաց կիւրակի օր միւսահիպ Նէտիմ, կայս. պալատան միւսահիպներու յատուկ սենեակը մտնելով բէվօլվէրի հարուածով մը սպաննած է իւր պաշտօնակիցը Ֆիրուզ աղան։ Ցետ օրինական քննութեանց Նէտիմ դատուած է զինուորական Միայնն ատենին առջև։ Բազմաթիւ վկայութեամբ և ոճրագործին կատարեալ խոստովանութեամբը հաստատուած լինելով թէ կանխամտածութեամբ սպաննած է իւր ընկերն, Նէտիմ մահուան դատապարտուած է։ Սակայն որպէս զի խնդրոյն Շէրիի կողմն ևս քննուի, Նէտիմ դատուած է նաև Բարձր. Շէյխ-իւլ Իսլամ էֆէնտիի նախագահութեամբ և բարձրաստիճան կրօնականներու անդամակցութեամբ կազմեալ ժողովի մը առջև։ Վկաները՝ Բիւսթէմ, Ճաֆէր, Ջիվէր, Ապտիւլլահի աղաներն ու Հասան ու Իզզէթ անուն երկու սպասաւորք ևս նոյն ժողովոյ առջև կրկնած են իրենց վկայութիւնները։ Սոյն ժողովն ևս, յետ մանրակրկիտ քննութեանց նկատելով որ Նէտիմ, ըստ իւր խոստովանութեան, սպաննած է իւր ընկերն, մահուան դատապարտած է զնա։ Այս վճիռը, զինուորական ատենի վճիռն, նախնական քննութիւններն, հարցաքննութեանց տեղեկագրերն, ամբաստանագրերն, ամբաստանագիրն և բժշկաց տեղեկագրերն ամբողջովին Նախարարաց Խորհրդոյն ներկայացուած են և սա յետ քննութեան որոշած է թէ Նէտիմ, որ իբրև մարդասպան մահուան դատապարտուած է զինուորական և շէրիի դատարաններու կողմէ, փութանակի կախուի։ Այս առթիւ տեղեկագիր մը ևս պատրաստած է. Բարձր. Շէյխ-իւլ-Իսլամ էֆէնտին ևս իւր Ֆէթվան տուած է հրամայելով կախել Նէտիմն իբրև սպանիչ Ֆիրուզ աղայի և և իբրև խռովարար։ Հետևաբար Նէտիմ շաբաթ գիշեր ոստիկանութեան միջոցաւ ի կախաղան հանուեցաւ ի Պէշիքթաշ, ըստ տրամադրութեան շէրիի վճռագրոյն և յօրինակ այլոց։»

(Արևելք)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Վիլհէլմ կայսրը հրամայեց կանցլէր իշխան Բիսմարկին միջոցներ ձեռք առնել պարզելու այն հարցը, թէ ինչպէս լոյս տեսան «Deutsche Rundschau»-ի մէջ Ֆրիդրիխ կայսրի յիշատակարանի մի քանի մասերը։ Յիշատակարանի շարունակութեան տպագրութիւնը դադարեցրած է։

—Յօնաց Գէօրգ թագաւորին հաւատացրել են Վիէննայում, որ Աւստրօ-Ունգարիան բարեկամական զգացմունքներ է տածում դէպի Յունաստանը, և չէ համակրում այն պրօպագանդային, որը տեղի է ունենում Մակէդօնիայում, և որը թշնամական է դէպի Յունաստանը։

—Փարիզից հեռագրում են, որ Սէնտ-Էտիէնում մեծ կռիւ տեղի ունեցաւ բանւորների մէջ, որոնց մի մասը գործադուլ անելով՝ ահագին ընդհարում ունեցաւ, միւս՝ գործադուլ չանող մասի հետ։

—Հոկտեմբերի 1-ին, ինչպէս գրում են Բեռլինից, այդ քաղաքում լոյս կը տեսնի մի նոր լրագրի առաջին համարը, որը կրում է «Գերմանացի բանւորների լրագիր» վերնագիրը։ Այդ նոր լրագրի նպատակն է կռւել սօցիալիզմի դէմ և ցոյց տալ գերմանացի բանւորներին, որ նրանք ի ր ա ն ց շահերի համար պէտք է հետևեն կառավարութեան խորհուրդներին, որը աւելի լաւ է հոգում նրանց ցաւերի մասին, քան թէ սօցիալիստական պրօպագանդիստները։ Այդ օրգանի ղեկավարներն են ազգային-ազատամիտ կուսակցութեան նշանաւոր անդամները, և պէտք է հետևեն այն ընթացքին, ինչ ընթացքի հետևում է պաստոր Շտէկկէր, թէև խոստանում են չը խառնել կ ր օ ն ը իրանց հակա-սօցիալիստական պրօպագանդայի հետ։ Բեռլինում կարծում են, որ այդ օրգանը ազդեցութիւն չի ունենայ բանւորների վրա։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Փոքր-Ասիայում բնակվող մի կաթօլիկ քահանայ հաղորդում է Սաֆէրից եւրոպական լրագիրներին, որ այդ քաղաքից 5 ժամ հեռու, Գազդատում բնակվող մի թիւրք՝ Հաջի Սալիման Սարա, նորերումս մեռել է 132 տարեկան հասակում։ Այդ ծերունին ունէր 7 կանայք և նրանք բոլորն էլ մարդուց առաջ մեռան և այդ կանանցից նա ունէր 60 տղայ և 9 աղջիկ, որոնք նոյնպէս բոլորն էլ մեռան։ Ութերորդ կնոջ հետ նա պսակվեց երբ ինքն արդէն 98 տարեկան էր և դարձեալ ունեցաւ նրանից 3 որդի։ Այս տարի նա կրկին ուզում էր պսակվել, բայց փող չունէր դրա համար։ Իր ամբողջ կեանքը այդ թիւրքը կերակրվում էր բուսական կերակուրներով, իսկ միսը միայն մեծ տօների և բայրամի ժամանակ էր ուտում։ Նա հագնում էր մի հասարակ քաթանի շապիկ, մեծ մասամբ բոբիկ էր շրջում, միայն

ճանապարհ ընկնելու ժամանակ կօշիկներ էր հագնում։ Իր ամբողջ կեանքի ընթացքում նա ոչ մի անգամ հիւանդ չէ եղել, բացի չորս օրից՝ մահից առաջ։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՓԱՐԻԶ, 21 սեպտեմբերի։ Այսօր յայտարարված է, որ իւրաքանչիւր օտարերկրացի, որը կը կամենայ ապրել Ֆրանսիայում, պէտք է երկու շաբաթվայ ընթացքում այդ մասին յայտնի տեղական մէրին իր և ծնողների անունը, հօր անունը և ազգանունը, ազգութիւնը, թէ վերջին անգամ ուր և ինչ ժամանակ էր ապրում, իր պարապմունքները, կնոջ և փոքրահասակ երեխաների անունը, տարիքը և ազգութիւնը։ Այդ յայտարարութեանը պէտք է կցվեն և դօկումենտներ։ Այդտեսակ կարգադրութիւնը պատճառաբանվում է նրանով, որ իշխանութեան համար անհրաժեշտ է իմանալ թէ ինչ օտարերկրացի ազգաբնակութիւն կայ Ֆրանսիայում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 սեպտեմբերի։ Երէկ երեկոյեան Նոցա կայսերական Մեծութիւնները, ուղեկցութեամբ Թագաժառանգի և Մեծ իշխան Գէորգ Ալէքսանդրօվիչի, Վլադիկավկազից գնացին Եկատերինօդար։

ԲԱԳՈՒ, 21 սեպտեմբերի։ Պարսից դեսպան պրինց Հուսամա-Սալթանէ՝ այցելելով նաւթային հորերը՝ գնաց Թիֆլիս։

ՎԻԷՆՆԱ, 21 սեպտեմբերի։ Այսօր առաւօտեան կայսր Վիլհելմ հասաւ արեւմտեան երկաթուղու կայարանը. Ֆրանց-Յովսէփ կայսրը պրուսական համազգեստով, «Սև Արծուի» շքանշանով, և ձեռքը սաղաւարտի մօտ տանելով, մօտեցաւ վագօնին, որի սանդուղքների վրա նրան սպասում էր Վիլհելմ կայսրը։ Բուրգում նրան հանդիպեցին աւստրիացոց կայսրուհին և Թագաժառանգուհին, որից յետոյ նա ընդունեց Թագաւորական տան անդամների այցելութիւնները։

ՎԻԷՆՆԱ, 21 սեպտեմբերի։ Վերջին օրերի ընթացքում, այստեղ մի քանի անգամ գաղտնի կերպով ազգային-գերմանական ագիտացիա առաջ բերվեցաւ, Վիլհելմ կայսրի ժամանելու առիթով ցոյցեր անելու համար։ Ոստիկանութիւնը աշխատում է ամեն տեսակ անտեղի ցոյցերի առաջն առնելու. զանազան խիստ կարգադրութիւններ են արված և յայտարարված է, որ ժողովրդական տօնախմբութիւններ և լուսաւորութիւն չը լինի։ Այդ բոլորը ազդեց ժողովրդի տրամադրութեան վրա, և այսօր, Վիլհելմ կայսրի եկած միջոցին, ժողովուրդը իրան չափաւոր կերպով պահեց. ուրախութիւն, սովորական ցոյցեր և ժողովրդի մեծ հոսանք տեղի չունեցան։

ԲԷԼԳՐԱԴ, 21 սեպտեմբերի Նատալիա Թագուհու կողմնակիցների արած փորձերը, որով նոքա ուզում էին համոզել նրան վերջ տալու իր կենակցութեան, անաջող անցան. այժմ ամուսնութեան լուծումը անխուսափելի է համարվում. ամուսնութիւն լուծող դատարանի վճիռը սպասվում է դեկտեմբերի սկիզբներին։

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ, 22 սեպտեմբերի։ Նոցա կայսերական Մեծութիւնները հասան այստեղ երէկ երեկոյեան 6 ժամին. կայարանում Նոցա դիմաւորեցին իշխանութեան ներկայացուցիչները և քաղաքագլուխը աղ ու հացով։ Տաճարում Ստավրօպօլի եպիսկոպոսը ողջունեց Նոցա Մեծութիւններին ճառով։ Նոցա Մեծութիւնները իջևանեցին շրջանապետի տանը։ Երեկոյեան քաղաքը լուսաւորված էր։

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ, 23 սեպտեմբերի։ Երէկ առաւօտեան շրջանային վարչութիւնից ուղևորվեց մայր-եկեղեցին հանդիսաւոր գնացքը զինուորական նշաններով։ Նոցա կայսերական Մեծութիւնների ժամանելուն և գոհացողական մաղթանք կատարելուն պէս, ատամանը մատուցեց Թագաւորին գաւազանը։ Թագաւորը դիմելով զինուորական շրջանին, յայտնեց իր ուրախութիւնը կովկաս գալու առիթով և յոյս յայտնեց, որ երիտասարդ կուբանացիները նոյնպէս ազնիւ և լաւ կը ծառայեն, ինչպէս ծառայել են ծերերը։ Բարձրաձայն և ոգևորված «ուրան» արձագանք տուեց Թագաւորի ողորմած խօսքերին։ Նշանները յետ տանելու ժամանակ զինուորական շրջանին առաջնորդում էր Թագաժառանգ Ցեսարեվիչը։ Ապա ատամանի տան մէջ Նոցա Մեծութիւնները ընդունեցին պատգամաւորութիւններ և նուէրներ։ Երեկոյեան Նոցա Մեծութիւնների մօտ կար ճաշկերոյթ հրաւիրվածներով։

ՎԻԷՆՆԱ, 23 սեպտեմբերի։ Վիլհելմ կայսրի այցելութեան հետ կապ ունեն բանակցութիւնները արևելեան հարցի մասին։ Կոմս Կալնօկիին շնորհված է Սև Արծուի շքանշանը բրիլիանտներով։

ՓԱՐԻԶ, 23 սեպտեմբերի։ Լիօնի շրջակայքում մեծ հեղեղ պատահեց։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

ԳՈՐԾԱՐԱՆ

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ՄԻՆԵՐԱԼԱԿԱՆ, ՄՐԳԱՅԻՆ ԵՒ ԳԱԶԱՅԻՆ ՋՐԵՐԻ

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ

ԲԱԹՈՒՄՈՒՄ

(Ցէրկօվնայա փողոցում, կօնստանտինօվի տան կից, որտեղ զետեղվում է Լօբկօ և ընկ. տպարանը)

Պատիւ ունեմ յայտնելու պ.պ. բժիշկներին և յարգելի հասարակութեանը որ ես նորից վերանորոգեցի և նշանաւոր կերպով ընդարձակեցի իմ գործարանս, աշխատելով բաւականացնել ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՏՈՒԹԵԱՆ բոլոր ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ, ջրերի պատրաստութեան վերաբերմամբ։

Գործարանի կառավարութիւնը ես յանձնեցի ՖԱՐՄԱՑԻԱՅԻ մի ՊՐՕՎԻԶՕՐԻ, որ փորձառութիւն է ստացել Ռուսաստանի մայրաքաղաքներում։ Գործարանն ունի ամենանոր ձևի մեքենաներ, նոյնպէս և ՋԻՎԻՆԻ հռչակաւոր ՖԻԼՏՐԸ, որը միակ է, որ աջողութեամբ մաքրում է ջրերը կապարից, կրից, երկաթից, օրգանական, միներալական մասնիկներից ու աղերից և գերազանցում է բոլոր միւս ֆիլտրներից իր մեքենայական և քիմիական գործողութեամբ։

Պրօվիզօրը մշտապէս գտնվում է և անձամբ պարապում է իմ գործարանում։ Շնորհով այն օժանդակ միջոցների, որ տալիս է գիտութիւնը անալիտիկական քիմիայի ճիւղում, այսուհետև իմ գործարանում կը պատրաստվեն, բացի զելտերեան, մրգային և գազային ջրերից, բոլոր ՄԻՆԵՐԱԼԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՋՐԵՐԸ, ինչպէս օրինակ՝ Վիշիի, Էմսի, Կարլսբադի, Մարիէնբադի ջրերը, լուծողական ջրերը բոլոր յայտնի աղբիւրների և այլն, հետևելով յայտնի հետազօտողների տուած կանոններին։ Արուեստական միներալական ջրերը, որոնք այժմ խորհուրդ են տալիս ընդունել հռչակաւոր բժիշկները, կարող են ոչ թէ միայն փոխարինել բնական ջրերին, բայց և ունեն մի քանի գերազանցութիւններ. նրանք կարող են միշտ թարմ դրութեան մէջ ձեռք բերվել, մի և նոյն ժամանակ պարունակելով իրանց մէջ ածխաթթու գազերի աւելի մեծ քանակութիւն, այդպիսով աւելի ախորժելի դառնալով խմելու համար և աւելի շուտ ներգործելով հիւանդ կազմուածքի վրա։

Աւելորդ չեմ համարում ասել որ ես միշտ աշխատում եմ պահել գործարանս կատարեալ մաքրութեան մէջ և վերաբերվել դէպի գործս ամենամեծ ճշգութեամբ և բարեխղճութեամբ, որի մասին յարգելի հասարակութիւնը կարող է համոզվել անձամբ այցելելով գործարանս ամեն ժամանակ։

Տարաձայնութիւններից խուսափելու համար, խոնարհաբար խնդրում եմ իմ ջրերի գործածողներին պահանջել որ իմ բոլոր արդիւնքները կրեն իմ ֆիրմայի ն շ ա ն ա կ ը, քանի որ ուրիշ գործարաններ կարող են ի չար գործածել հասարակութեան հաւատարմութիւնը։

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑ 36—50 (Ե)

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ւ

ԱԲԻՍՈՂՈՄ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ

ՌՈՒՍԵՐԷՆԻՑ-ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԳԻՐՔ

Գինն է 3 րուբլի, ճանապարհի ծախսը գնողի վրա է։

Միանուագ քանից աւելի գնողին զիջումն կը լինի։

Վաճառվում է ԲԱՅԱՌԱՊԷՍ Խիզիկելի և ընկ. գրավաճառանոցում, Թիֆլիս, Գօլօվինսկի Պրօսպէկտ, առաջին Գիմնազիայի հանդէպ։ 1—40

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Ուրբաթ, 30 սեպտեմբերի, ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ NIEMEN (ՆԻԷՄԷՆ) նաւապետ SEIPIONI (ՍԷՅՊԻՕՆԻ) մտնելով Կ. Պօլիս, Զմիւռնիա և Սիրա։

Ագէնտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գ. ԷՍՍԷՆԺԷՐ, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵԶՈՒԲԵԱՆ ՀԵԶՈՒԲԵԱՆՑ։ 1—2

ԻԳԱԿԱՆ ԿԻՐԱԿԵԱՑ ՁՐԻԱԹՈՇԱԿ ԴՊՐՈՑՈՒՄ (հասակաւորների և երեխաների համար, 10 տարեկանից ոչ պակաս) ուսուցանում են կարդալ, գրել և հաշւել՝ հայոց, ռուսաց և վրաց լեզուներով։ Ընդունելութիւնը կը լինի ամենայն կիրակի։ Պարապմունքը տեւում է 12 ժամից մինչև ժամի 3-ը։

Դպրոցը գտնվում է Զավչավաձեվսկի փողոցում, Ֆեդօրենկօի տանը, Քաղաքային Արհեստաւորաց իգական դպրոցի շինութեան մէջ։ 2—3 (Շ.)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Հինգշաբթի, սեպտեմբերի 29-ին, ՄԻՆԳՐԷԼԻԱ (MINGRÉLIE) շոգենաւը, նաւապետ ԺԻԲՈՒԷՆ (GIBOIN) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզօն, Օրդու, Սամսօն, Կ. Պօլիս և Մարսէյլ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմօզլուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում Նախկին Արծրունի գալլերէում, № 103. 3—3

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկայք սոքա են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական Թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն, և 7) գեղագրութիւն։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 25-ից։ Ընդունելութիւնները սեպտեմբերի 15-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Լաբօրատօրնայա փողոցի վրա, № 11։ Իսկ օգոստոսի 20-ից Աղէքսանդր Փրիդօնօվի տանը, № 9 Սերգիէվսկայա և Նագօրնայա փողոցների անկիւնում, դեղատան դիմաց, ուր որ անցնելու են կուրսերը։ Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ՋՐԻԱՊԷՍ եղբ. Ծովիանօվների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

17—20 (Ե. Շ.)

Դուրս եկաւ մամուլի տակից և վաճառվում է գրավաճառանոցներում Սահակ քահանայ Սահակեանի հետևեալ աշխատութիւնները։ ա) ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ հին ուխտի 182 երես, գինն է 30 կոպ., բ) ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՕՆԻ, ուղեցոյց հայ կրօնուսոյցների համար (հին ուխտի նիւթի մշակութիւնը) 494 երես, գինն է 1 ր. 75 կոպ.։ Վերջին գիրքը պարունակում է իր մէջ 14 պատկեր և 3 քարտէզ։ 1—5

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ձեռագործի և ձևի ուսումնարանը բացվում է սեպտեմբերի 22-ին։ Ընդունվում են ծխական ուսումնարաններում ուսումն աւարտած օրիորդները։

Սերգէեվսկի փողոց, Շահպարոնեանի տուն։ 3—3

ԿԷՕԼԷՐԵԱՆ ՊՐՕՎԱՆՍԱՅԻՆ ԻՒՂ

ԳԻՏՈՒՆ-ԳՆԱՀԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Գաւառներում ծախվում է բոլոր նշանաւոր առևտրականների մօտ. Մօսկվայում—Ր. ԿԷՕԼԷՐԻ և ԸՆԿ. մօտ, Նիկօլսկայա փողոցի վրա։ № 6. Ц. К. О. (2—3)

Дозволено цензурою, Тифлисъ 23 Сентября 1888 г. Типографія Канцелярiи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.